

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 20

Ամենագորութիւն – Սա նշանակում է թէ Աստուած ունի բոլոր գորութիւնը եւ Նա ամենակարող է (Էլ Շադայ): Ինքնագոյ Աստուած բոլոր բաները գոյացնում է ոչնչից (Ծննդոց 1, Եբրայեցիս 11:3): Նա գորութիւն ունի անելու բոլոր այն բաները որոնց Ինք Իր խորհրդում հրամայել ու որոշել է անելու : Որեւէ բան չի կարող դիմադրել կամ արգելել Նրան: (Սաղմոս 135:6 , Երեմեայ 32:17)

Աստուած բացարձակ հեղինակութեամբ գերիշխան է բոլոր բաների վրայ, ու երկնքի մէջ եւ երկրի վրայի բոլոր բաները, թէ գիտեցաւ կամ անգիտեցաւ, կամայ կամ ակամայ, ընդունելով կամ մերժումով հպատակ են Նրան (Երկրորդ Մնացորդաց 20:6 , Առակաց 19:21 , Յոբ 42:2) Պօղոս առաքեալ Աբրահամին Աստծոյ կատարած ուխտի մասին խօսելիս ասում է Հռովմայեցիս 4:17 *«Մեռելներին կենդանի է անում եւ չլինող բաները լինողի պէս է կանչում»* (Ծննդոց 18:13–14, Մատթէոս 3:9, Մարկոս 10:27)

Ամենագորութեան վարդապետութիւնը չի նշանակում որ Աստուած կարող է որեւէ բան անել: Աստծոյ խօսքից իմանում ենք թէ կան բաներ որ Աստուած չի կարող անել: Նա չի կարող ստել: Նա չի կարող մեղանչել: Նա չի կարող փոխել: Նա չի կարող չարով փորձել: Նա չի կարող հակասութիւնները համադրել: Նա չի կարող մեռնել: Նա չի կարող Աստուած լինելուց դադարել: Նա չի կարող իր ստորոգելիներից որեւէ մէկը ուրանալ: Նա չի կարող իր անհաղորդելի յատկութիւններից որեւէ մէկը ուրիշներին հաղորդել: Նա չի կարող մի ուրիշ աստուած ստեղծել: Աստուած չի կարող իր բնութեան եւ իր կամքի հակառակ որեւէ բան անել: Եթէ Նա այսպէս բաներ անէր, Նա Աստուած լինելուց կը դադարէր: (Թւոց 23:19 , Ա. Թագաւորաց 15:29 , Հռովմայեցիս 1:23 , Բ. Տիմոթէոս 2:13 , Եբրայեցիս 6:18 , Յակոբոս 1:13, 17)

Այս վարդապետութիւնը մեծ վախ է բերում մեղաւորների վրայ, որովհետեւ Աստուած գորութիւն ունի եւ կը դատի եւ կը դատապարտի չարերին: Սակայն նոյն պահին այս ուսուցումն էր մեծ միսիթարութիւն է հաւատացեալների համար, որոնց Աստուած փրկել է ու Նա կը սրբացնի ու վերջապէս կը փառաւորի նրանց:

Թէեւ Աստծոյ ամենագորութիւնը, ամենագիտութիւնը, եւ ամենուրեքութիւնը դասում են որպէս Նրա անհաղորդելի յատկութիւններից, բայց երբ պարզապէս խօսում ենք միայն Աստուածային գորութեան, գիտութեան եւ ներկայութեան մասին սրանց կարող ենք դասել որպէս հաղորդելի ստորոգելիներ որովհետեւ Աստուած մարդուս թէեւ սահմանափակաբար բայց եւ այնպէս տեսլ է գորութիւն, գիտութիւն ու ներկայութիւն:

Անզգայութիւն (Անկրօտութիւն) – Լատիներէնից արմատ առած այս նշանակում է թէ Աստուած ցաւից կամ մարդկային զգացումներից խռովութեան մատուցելու անկարող է: Ուէստմիհիսթըր Հաւատոյ Հանգանակը այսպէս է նշում թէ *«Աստուած ... անմարմին, անմասնիկ, անկիրք ու անփոփոխ է»*: Շատեր առարկում են թէ այս ուսուցումն էր սովորեցնում է թէ Աստուած անտարբեր, պաղ, եւ անզգայ է: Շատեր համարներ են յիշում որոնք նշում են Աստծոյ զգացումների փոփոխականութիւնը, ուր Աստուած *դառնանում է* (Սաղմոս 78:40), *զոջում է* (Ծննդոց 6:6), *բարկանում է* (Ելից 32:10–12), *հաննում է* (Գ. Թագաւորաց 3:10), *խղճում է* (Սաղմոս 72:13), *կամենում է* (Սաղմոս 35:27), *ուրախանում է* (Սովորեցնելու 3:17): Ինչպէ՞ս կարելի է այս ուսուցումն էր համադրել այս համարների հետ:

Աստուածաշունչը մարդկային ֆիզիկական լեզու է գործածում բացատրելու Աստծուն: Այս ուր կոչում է մարդակերպային լեզու: Նաեւ Աստծուն բացատրելու համար գործ է ածում մարդկային զգացումների ռեաբանութիւն որը կոչում է մարդագրացային լեզու: Երբ Աստուածաշունչը բացատրում է Աստծուն մարմնի մասերով, անմիջապէս հասկանում ենք թէ այն նկարագրութիւնները հասկանալու ենք նկարագրական լեզուով ու ոչ թէ տառացի իմաստով: Նոյնն էլ ուղիղ է երբ Աստուած բացատրում է որպէս թէ Նա մարդկային զգացումներ ունի: Եթէ այսպէս չլինէր, այն ժամանակ Աստուած շարունակաբար պիտի հիասթափէր ու շարունակաբար պիտի խռովալուզէր եւ Նրա ծրագրերը շարունակաբար պիտի ազդէին դրսի ազդակներից, ու Նրա խոստումները այլեւս անփոփոխ չէին կարող լինել: Բայց Աստծոյ զգացումները մարդկային կիրքերի պէս չեն: Աստծոյ անփոփոխականութիւնը եւ Նրա անզգայութիւնը երաշխաւորում է իր ժողովրդի հանդէպ ունեցած Նրա անսասան սէրը: (Ողբ Երեմիայ 3:21–24 , Մաղաբեայ 3:6)

Թէպէտ Աստծոյ զգացումների արտայայտութիւնները պատկերազարդ են, բայց նրանք անիմաստ չեն: Սրանք օգնում են մեզ հասկանալու թէ ինչպէս է անհուն Աստուածն յարեբերում հունաւոր արարածների հետ: Աստուածաշունչը սովորեցնում է թէ Աստուած անհատական էակ է եւ իսկական զգացումներ ունի: Այն զգացումները երբէք կրաւորական ու ակամայ չեն, այլ ընդհակառակը միշտ գործակատար ու կամովին են: Նրանք անկառավար կամ խթանալի չեն: Աստծոյ զգացումները իր միւս ստորոգելիների պէս անփոփոխ են:

Մենք մեծարում ու հիանում ենք հունաւոր արարածների ունեցած ժամանակաւոր ու ոչկատարեալ յաջողութիւններին, լինեն նրանք ուսումնային, մարզական կամ թէ ուրիշ մարզերի մէջ ձեռք բերած հաղթանակներ: Սակայն որքա՞ն անելի շատ փառաբանելու ենք անհուն Արարիչ Աստծուն, Որի նկարագիրը եւ ստորոգելիները փառասանն են: Միմիայն Նա է արժանի մեր անվերջանալի երկիրդածութեան ու պաշտամունքին: